ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0010, ք.Երևան, Վ. Սարգսյան 5

№ ԴԴ-3- Շ-6969
«10» նոյեմբերի 2014 թ.

**«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում գրանցված մասնակիցներին**

Հարգելի մասնակից

«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ապրանք: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ԴԴ-ԾՀԱՊՁԲ-11/10-01»:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետ՝ կայք) միջոցով, ոչ ուշ քան 2014թ. նոյեմբերի 20-ը, ժամը 10:00-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի պետ Գ.Ներսիսյանը (հեռ. 010 511 788):

Հայտերը կբացվեն 2014թ. նոյեմբերի 20-ին, ժամը 10:00-ին՝ կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար հանդերձանքի ձեռքբերումը:

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար՝ հանդերձանքի (կազմված է 27 չափաբաժնից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N3 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է արժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Մասնակիցները կարող են ընթացակարգի հայտ ներկայացնել ինչպես յուրաքանչյուր չափաբաժնի, այնպես էլ միաժամանակ մի քանի կամ բոլոր չափաբաժինների համար: Հայտերի գնահատումը, համեմատումը և հաղթողների որոշումն իրականացվելու է ըստ առանձին չափաբաժինների:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

***Միաժամանակ հայտնում ենք, որ՝***

***1.«ԳԱԿ-ԾՀԱՊՁԲ-11/10» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների հրավերի պահանջների համաձայն՝ յուրաքանչյուր չափաբաժնի համար գնային առաջարկն անհրաժեշտ է ներկայացնել ոչ թե միավորի, այլ պայմանագրի կատարման համար առաջարկվող գնով /տվյալ չափաբաժնի ամբողջ քանակի համար առաջարկվող գնով/: Եթե մասնակցի կողմից գնային առաջարկը կներկայացվի միավորի գնով, ապա վերջինիս հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:***

***2. <<ԴԴ-ԾՀԱՊՁԲ-11/10-01>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրով նախատեսված է կանխավճար, ինչով պայմանավորված՝ ընտրված մասնակցը նախապես՝ մինչև պայմանագիր կնքելը, պետք է ներկայացնի կանխավճարի ապահովում /երաշխիքի ձևով/: Կանխավճարի ապահովում կարող է***

*չներկայացվել, եթե ՀՀ կառավարության 10/02/11թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 110-րդ կետի 7-րդ ենթակետի համաձայն ընտրված մասնակիցը համաձայնում է պայմանագիրը կատարել մինչև 2014թ. դեկտեմբերի 19-ը ներառյալ:*

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:
Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:
«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ datgnumner@mail.ru:

**ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ,**
**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ՝ ԹԾՏՈՒՆԻ ԱՍԻԿՅԱՆ**

Կատ՝. Նյութատեխնիկական ապահովման վարչության
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝ 511-788, 511-787